ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ ՈՐ ՅԱՐՅԱԽ

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի նուիրական յարկի ներքոյ ընդունելու Ձեզ եւ բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքները:

Սիրելի պրն Բալայեան,

Ազգային, հասարակական, գրական-ստեղծագործական տասնեակ տարիների բեղմանաւոր գործունէութեան շնորհիւ Ձեր անունը ծանօթ ու սիրելի է մեր ժողովրդի զաւակներին: Արցախեան հերոսամարտի ակունքներում էք Դուք՝ որպէս գաղափարական պայքարի առաջամարտիկ: Հաւատաւոր ու հայրենասէր Ձեր հոգու կանչով Դուք նուիրուեցիք հայրենի մեր Արցախ աշխարհի ազատագրման սրբազան գործին եւ մեր մտաւորականութեան ներկայացուցիչների հետ միասին արցախահայութեան ու համայն մեր ժողովրդի ձայնը խիզախօրէն հնչեցրեցիք Խորհրդային Միութեան բարձր ատեաններում, պաշտպանելով ազգային մեր արդար դատը: Հայրենի մեր Երկրին ու Արցախին պարտադրուած պատերազմի տարիներին մշտապէս եղաք Աստուածպարգեւ մեր հայրենիքը պաշտպանելու ելած հայրենասէր նուիրեալների կողքին՝ ոգեշնչելով քաջորդի Մեր զաւակներին ու մասնակցելով մեր յաղթանակների կայացմանը:

Ներկայիս Դուք անընդհատ եռանդով շարունակում էք Ձեր ազգանուէր գործունէութիւնը՝ տարբեր յանձնառութիւններով ու նախաձեռնութիւններով ծառայելով ի խնդիր Հայրենի մեր Երկրի բարգաւաճման ու առաջընթացի, Արցախի անկախութեան ճանաչման, Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զօրացման ու առաւել արգասաւորման եւ համայն մեր ժողովրդի միասնականութեան ամրապնդման: Առանձնակի գոհունակութիւն է Հայրապետիս համար նշել, որ կեանքի ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք Ձեր հոգու ջերմ սէրն ու նուիրումը՝ հանդէպ մեր Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Հայրենի մեր երկրին ու հարազատ ժողովրդին մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակաւ շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք առ Ամենակալն Ապրուած, հայցելով, որ միշտ շնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ:

Թող Բարձրեալ Տէրը Ամենախնամ Իր Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Ապրիլի
Յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 555